ՓՈՓ. 27.12.2013թ. Հր. 2/733-Լ
ՓՈՓ. 30.12.2025թ. Հր. 3858-Լ

Հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի № 1111-Ն որոշմամբ

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2009 թվականի հոկտեմբերի 12-ի № 1/1413-Լ հրամանով

Հիմնադրի կողմից լիազորված
պետական մարմնի ղեկավար

[ստորագրված և կնքված] Էդվարդ Նալբանդյան

Կազմված է 21 հոկտեմբերի 2009թ., 5 (հինգ) օրինակից և բաղկացած է 9 (ինը) թերթից

ՕՐԻՆԱԿ № ___

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից

« 28 » _____10_____ 2009թ.

Գրանցման թիվ 286.210.07377

Վկայական 03 Ա 086090

Կենտրոնի Տ/Բ պետ

[ստորագրված և կնքված] Ա. Թորոսյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2009

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Դպրոցի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

3. Դպրոցի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է:

4. Դպրոցը ստեղծվել և գործում է առանց ժամկետային սահմանափակման:

5. Դպրոցի գործունեությունը կարգավորվում է «Դիվանագիտական ծառայության մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

6. Դպրոցն ունի իր նպատակների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

7. Դպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, խորհրդանշան, ձևաթուղթ և այլ անհատականացման միջոցներ:

9. Դպրոցի լրիվ անվանումն է.

հայերեն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ռուսերեն՝ «Дипломатическая школа Министерства иностранных дел Республики Армения» государственная некоммерческая организация,

անգլերեն՝ “Diplomatic School of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia” State non commercial organisation:

Դպրոցի կրճատ անվանումն է.

հայերեն՝ «Հայաստանի դիվանագիտական դպրոց»,

ռուսերեն՝ «Дипломатическая школа Армении»,

անգլերեն՝ “Diplomatic School of Armenia”:

10. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական 2-րդ շենք:

II. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Դպրոցի գործունեության առարկան և նպատակներն են.

1) դիվանագիտական կադրերի պատրաստումը՝ բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հատուկ մասնագիտական գիտելիք տրամադրելու միջոցով,

2) դիվանագետների, ինչպես նաև պետական մարմինների արտաքին կապերի ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստումը,

3) միջազգային հարաբերությունների ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությանը մասնակցությունը,

4) այլ ուսումնական ծրագրերի իրականացումը:

III. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Դպրոցի կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը՝ ի դեմ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի, Դպրոցի կառավարման խորհուրդը, իսկ ղեկավարումը՝ Դպրոցի տնօրենը:

Ա. Հիմնադիրը

13. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են.

1) Դպրոցի հիմնադրումը, վերակազմակերպումը և լուծարումը,

2) Դպրոցի գործունեության առարկայի և նպատակների սահմանումը և փոփոխումը,

3) Դպրոցին սեփականության և (կամ) անհատույց իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը,

4) Դպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

5) Դպրոցի՝ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից դառնալու վերաբերյալ որոշում կայացնելը,

6) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

Բ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը

14. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է Դպրոցի կառավարման խորհուրդը և դադարեցնում է նրա անդամների լիազորությունները,

2) օրենքի պահանջներին համապատասխան՝ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Դպրոցի տնօրենին,

3) Դպրոցի կառավարման խորհրդի ներկայացմամբ հաստատում է՝

ա) Դպրոցի գործունեության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ ռազմավարական, ուսումնական, վերապատրաստման, ինչպես նաև միջազգային համագործակցության ծրագրերը,

բ) դիվանագիտական կադրերի պատրաստման դասընթացների ընդունելության մրցույթի անցկացման կարգը,

գ) դիվանագիտական կադրերի պատրաստման դասընթացների ընթացքում ունկնդիրների կողմից հանձնվող քննությունների տեսակը, անցկացման կարգը, դրանց գնահատման ընթացակարգերը, գնահատականների հիման վրա ունկնդրի հանրագումարային միավորի հաշվարկման կարգը,

դ) դիվանագետների պատրաստման դասընթացների ընդունելության մրցույթների և ավարտական քննական հանձնաժողովների կազմերը,

4) իրականացնում է Դպրոցի գործունեության նկատմամբ վերահսկողությունը,

5) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Դպրոցի կառավարման խորհրդի և Դպրոցի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող որոշումները, հրամանները, հրահանգները, ցուցումները,

6) լսում է Դպրոցի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

7) վերահսկողություն է իրականացնում Դպրոցին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, ինչպես նաև Դպրոցի սեփականության պահպանության նկատմամբ,

8) հաստատում է Դպրոցի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Գ. Դպրոցի կառավարման խորհուրդը

15. Դպրոցի կառավարման խորհրդի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, միջազգային կազմակերպությունների, գիտական և կրթական հաստատությունների ներկայացուցիչներ և Դպրոցի կոլեկտիվի ընդհանուր ժողովում ընտրված աշխատողներ:

16. Դպրոցի կառավարման խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը երկու տարի է:

Դպրոցի կառավարման խորհրդի անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:

17. Դպրոցի կառավարման խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

1) պաշտոնանկության կամ ժամկետի ավարտման դեպքում,

2) գրավոր դիմումի հիման վրա կամ կառավարման խորհրդի առաջարկությամբ, եթե վերջինս ոչ պատշաճ է կատարում կառավարման խորհրդի անդամի իր լիազորությունները:

18. Դպրոցի կառավարման խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության:

19. Դպրոցի կառավարման խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

Դպրոցի կառավարման խորհրդի նիստերը հրավիրվում են կառավարման խորհրդի նախագահի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի կամ Դպրոցի տնօրենի պահանջով: Նոր ձևավորված կառավարման խորհրդի առաջին նիստը հրավիրում է տարիքով ավագ անդամը:

Դպրոցի տնօրենն իրավունք ունի մասնակցելու կառավարման խորհրդի նիստերին միայն խորհրդակցական ձայնի իրավունքով:

Դիվանագիտական դպրոցի կառավարման խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է դրա անդամների երկու երրորդը:

Կառավարման խորհրդի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ:

20. Դպրոցի կառավարման խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Դպրոցի կառավարման խորհրդի աշխատանքները,

2) հրավիրում է Դպրոցի կառավարման խորհրդի նիստերը և նախագահում դրանք,

3) կազմակերպում է նիստերի արձանագրումը,

4) եռամսյակը մեկ անգամ տեղեկություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին Դպրոցի կառավարման խորհրդի գործունեության մասին:

21. Դպրոցի Կառավարման խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է կառավարման խորհրդում տարիքով ավագ անդամը:

22. Դպրոցի Կառավարման խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

23. Կառավարման խորհուրդը՝

1) հաստատում է իր աշխատակարգը,

2) ընտրում է Կառավարման խորհրդի նախագահին,

3) Դպրոցի տնօրենի ներկայացմամբ քննարկում և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հաստատմանն է ներկայացնում՝

ա) Դպրոցի գործունեության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ ռազմավարական, ուսումնական, վերապատրաստման, ինչպես նաև միջազգային համագործակցության ծրագրերը,

բ) դիվանագիտական կադրերի պատրաստման դասընթացների ընդունելության մրցույթի անցկացման կարգը, և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հաստատումից հետո հրապարակում է այն,

գ) դիվանագիտական կադրերի պատրաստման դասընթացների ընթացքում ունկնդիրների կողմից հանձնվող քննությունների տեսակը, անցկացման կարգը, դրանց գնահատման ընթացակարգերը, գնահատականների հիման վրա ունկնդրի հանրագումարային միավորի հաշվարկման կարգը,

դ) դիվանագետների պատրաստման դասընթացների ընդունելության մրցույթների և ավարտական քննական հանձնաժողովների կազմերը,

4) Դպրոցի տնօրենի ներկայացմամբ հաստատում է Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոնները,

5) իրականացնում է ընթացիկ վերահսկողություն Դպրոցի տնօրենի նկատմամբ, եռամսյակը մեկ քննարկում և հաստատում է Դպրոցի տնօրենի հաշվետվությունները,

6) Դպրոցի տնօրենի ներկայացմամբ քննարկում և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին է ներկայացնում Դպրոցի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկություններ, Դպրոցի տարեկան հաշվետվությունը, ներառյալ՝ ֆինանսական հաշվետվությունները,

7) Դպրոցի տնօրենի ներկայացմամբ քննարկում է Դպրոցում դասավանդող դասախոսների թվային և անհատական կազմը, ինչպես նաև նրանց վարձատրության չափը,

8) հաստատում է աուդիտ իրականացնող անձին,

9) սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում տնօրենի ներկայացմամբ կիրառում է կարգապահական տույժեր Դպրոցի ունկնդիրների նկատմամբ,

10) սույն կանոնադրությանը համապատասխան՝ ընդունում է որոշումներ և վերահսկում է դրանց կատարման ընթացքը:

Դ. Դպրոցի տնօրենը

24. Դպրոցի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Դպրոցի տնօրենը: Դպրոցի տնօրենն իր գործունեությամբ հաշվետու է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին: Դպրոցի տնօրենը կարող է ունենալ տեղակալ: Տեղակալը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է դպրոցի տնօրենի հրամանով: Տեղակալը ղեկավարում է դպրոցի գործունեության որոշակի ոլորտներ՝ դպրոցի տնօրենի հանձնարարություններին, հրամաններին և կարգադրություններին համապատասխան: Դպրոցի տնօրենի լիազորությունների կատարման ժամանակավոր անհնարինության դեպքում նրան ժամանակավորապես փոխարինում է տեղակալը:

Դպրոցի տնօրենը՝

1) ղեկավարում է Դպրոցի ուսումնական, գիտական, ֆինանսական և այլ գործունեությունը,

2) Դպրոցի կառավարման խորհրդի քննարկմանն է ներկայացնում.

ա) Դպրոցի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ ռազմավարական, ուսումնական և վերապատրաստման, ինչպես նաև միջազգային համագործակցության ծրագրերի մասին առաջարկությունները,

բ) դիվանագիտական կադրերի պատրաստման դասընթացների ընդունելության կարգի վերաբերյալ առաջարկություններ,

գ) դիվանագիտական կադրերի պատրաստման դասընթացների ընթացքում ունկնդիրների կողմից հանձնվող քննությունների տեսակի, անցկացման կարգի, դրանց գնահատման և բողոքարկման ընթացակարգերի, գնահատականների հիման վրա ունկնդրի հանրագումարային միավորի հաշվարկման կարգի վերաբերյալ առաջարկություններ,

դ) դիվանագետների պատրաստման դասընթացների ընդունելության մրցույթների և ավարտական քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ առաջարկություններ,

3) Դպրոցի կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում Դպրոցի աշխատանքային ներքին կանոնակարգերը, այդ թվում՝ հաստիքացուցակն ու աշխատանքային ներքին կարգապահական կանոնները,

4) եռամսյակը մեկ Դպրոցի գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդին,

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Դպրոցի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի միջոցներ և կարգապահական տույժեր,

6) առանց լիազորագրի հանդես է գալիս Դպրոցի անունից, ներկայացնում է նրա շահերը, ներկայացնում է Դպրոցը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

8) տալիս է Դպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր,

9) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

10) կնքում է գործարքներ, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համաձայնությամբ՝ նաև խոշոր գործարքներ,

11) կազմակերպում է կառավարման խորհրդի որոշումների կատարումը,

12) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը,

13) առաջարկություններ է ներկայացնում կառավարման խորհրդին՝ ունկնդիրներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

14) իրականացնում է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

IV. ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

25. Դպրոցում դասընթացներ կազմակերպվում են՝

1) սույն կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դիվանագիտական կադրերի պատրաստման նպատակով,

2) սույն կանոնադրության 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման նպատակով,

3) սույն կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ այլ ուսումնական ծրագրերի իրականացման նպատակով:

26. Դպրոցում դասընթացներն անցկացվում են դասախոսությունների, սեմինարների, ուսումնական խաղերի, բանավեճերի, ինչպես նաև ունկնդիրների ինքնակրթությունը խրախուսող դիդակտիկ նյութերի, տեսաժապավենների, ձայնագրված դասախոսությունների օգտագործմամբ և կրթական արդի այլ եղանակներով:

27. Դասընթացներն անցկացնում են դասախոսները, որոնք պայմանագրային կարգով հրավիրված՝ Հայաստանցի կամ օտարերկրյա մասնագետներ են, ինչպես նաև պետական կառավարման մարմինների պաշտոնյաներ:

Ա. Դիվանագիտական կադրերի պատրաստման նպատակով անցկացվող դասընթացները

28. Դիվանագիտական կադրերի պատրաստման նպատակով անցկացվող դասընթացներում Դպրոցի ունկնդիր կարող են լինել մինչև 35 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր տիրապետում են հայերենին, դասընթացների դասավանդման լեզուներին, ունեն բարձրագույն կրթություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության

2002 թվականի փետրվարի 13-ի թիվ 121 որոշմամբ հաստատված «Դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկին» համապատասխան:

Դպրոցի ունկնդիր չեն կարող լինել այն անձինք, ովքեր.

ա) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել,

բ) դատական կարգով զրկվել են որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից,

գ) տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը դիվանագիտական ծառայության անցնելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 13-ի թիվ 121 որոշմամբ հաստատված «Ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկին» համապատասխան,

դ) դատապարտվել են հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ չի մարվել:

29. Դասընթացների յուրաքանչյուր առարկայական կուրսի ավարտին ունկնդիրները հանձնում են քննություն, որի նպատակը ստացած տեսական գիտելիքների, ինչպես նաև գործնական հմտությունների գնահատումն է:

Քննությունների գնահատումն օգտագործվում է Դպրոցն ավարտելիս ունկնդրի հանրագումարային միավորի հաշվարկման համար:

30. Ունկնդիրները անցնում են պրակտիկա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում:

Պրակտիկայի ղեկավարը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարն է: Պրակտիկայի ղեկավարները պարտավոր են ապահովել ունկնդրի կողմից պրակտիկայի անցկացումը՝ ծրագրին համապատասխան:

Պրակտիկայի ավարտին ղեկավարը Դպրոցին է հանձնում գրավոր բնութագիր, որտեղ պրակտիկայի ընթացքում ունկնդրի կողմից դրսևորված գործնական և անհատական հատկանիշների նկարագրությամբ ունկնդրի պրակտիկան գնահատում է դրական կամ բացասական:

31. Եթե Դպրոցում դասավանդվող առարկայական կուրսից (կուրսերից) հանձնված քննության (քննությունների, ինչպես նաև վերաքննության) արդյունքներով քննական միավորը պակաս է տվյալ առարկայական կուրսը հանձնված համարելու համար սահմանված նվազագույն միավորից կամ պրակտիկան բացասական է գնահատվում, ապա ունկնդիրը ավարտական վկայական չի ստանում:

32. Ուսման ընթացքում ունկնդիրը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության Դպրոցի տնօրենի կամ Կառավարման խորհրդի կողմից: Ունկնդիրը կարող է իր նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումը բողոքարկել Կառավարման խորհրդին որոշումը ստանալու պահից 15-օրյա ժամկետում:

33. Կարգապահական տույժերի տեսակներն են՝

1) նախազգուշացում,
2) նկատողություն,
3) խիստ նկատողություն,
4) Դպրոցից հեռացում:

34. Կառավարման խորհուրդը Դպրոցի տնօրենի ներկայացմամբ կարող է ունկնդրին, որպես կարգապահական տույժ, հեռացնել Դիվանագիտական դպրոցից հետևյալ դեպքերում.

1) եթե նա պարբերաբար անհարգելի պատճառով բացակայում է դասերից,

2) եթե նա կատարել է այնպիսի արարք, որը, դիվանագետի էթիկայի կանոնների համաձայն, հիմք է դիվանագետի ծառայությունից ազատման համար,

3) սույն կանոնադրության 30-րդ կետում նշված սահմանափակումների վերաբերյալ սխալ կամ կեղծ տեղեկություններ է ներկայացրել:

35. Դպրոցից հեռացված ունկնդիրը զրկվում է Դպրոց կրկին ընդունվելու իրավունքից:

36. Ունկնդիրը Դպրոցի տնօրենի ներկայացմամբ և խորհրդի որոշմամբ ազատվում է Դիվանագիտական դպրոցից, եթե.

1) նա դիմում է այդ մասին,

2) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան մեկ ամիս անընդմեջ կամ գումարային երկու ամիս բացակայել է դասերից,

3) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած,

4) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, կամ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով,

5) ի հատ է եկել դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակմանը խոչընդոտող՝ սույն կանոնադրության 28-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված հիվանդություն:

37. Դպրոցի ունկնդիրներին տրվում է դասընթացներին մասնակցությունը հավաստող ավարտական վկայական:

38. Դիվանագետների պատրաստման դասընթացները Դպրոցի կառավարման խորհրդի կողմից սահմանված բարձր ցուցանիշներով ավարտածներն օրենքով սահմանված կարգով նշանակվում են դիվանագիտական ծառայության պաշտոնի թափուր հաստիքների առկայության դեպքում, իսկ դրանց բացակայության դեպքում գրանցվում են դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում:

Բ. Դիվանագետների վերապատրաստման դասընթացները

39. Դպրոցը, սույն կանոնադրության 40-րդ կետին համապատասխան սահմանված կարգով հաստատված վերապատրաստման ծրագրին համապատասխան, պարբերաբար կազմակերպում և անցկացնում է վերապատրաստման դասընթացներ դիվանագետների համար:

40. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության մրցութային ատեստավորող հանձնաժողովը մինչև համապատասխան օրացուցային տարվա հոկտեմբերի 1-ը սահմանում է վերապատրաստման հիմնական ուղենիշները, վերապատրաստման ծրագրերի ընդհանուր ժամաքանակը և վերապատրաստման ենթակա պաշտոնյաների ցանկը, որի հիման վրա Դպրոցի կառավարման խորհուրդը մինչև համապատասխան օրացուցային տարվա նոյեմբերի 1-ը մշակում է վերապատրաստման ծրագրերը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հաստատմանը:

41. Վերապատրաստման ընթացքում դիվանագետներն ազատվում են իրենց պաշտոնեական պարտականությունների կատարումից աշխատավարձի և այլ հավելավճարների իրավունքի պահպանմամբ:

Գ. Պետական մարմինների արտաքին կապերի ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման դասընթացները

42. Դպրոցը, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաստատված վերապատրաստման ծրագրին համապատասխան, պարբերաբար կազմակերպում և անցկացնում է վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների արտաքին կապերի ստորաբաժանումների աշխատակիցների համար համապատասխան պետական մարմինների հայտերի հիման վրա:

V. ԴՊՐՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

43. Դպրոցի սեփականությունը ձևավորվում է Դպրոցի հիմնադրման ժամանակ հիմնադրի որոշմամբ սահմանված չափով հանձնված գույքից, հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Դպրոցի գործունեության ընթացքում ձևավորված և ձեռք բերված գույքից: Դպրոցի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել նաև՝

ա) պետական բյուջեից ստացվող միջոցները,

բ) դրամաշնորհները և նվիրատվությունները,

գ) օրենքով չարգելված այլ միջոցները:

44. Հիմնադիրը կարող է Դպրոցին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից ամրացված գույքը:

VI. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

45. Դպրոցի վերակազմակերպումը և լուծարումն իրականացվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

46. Դպրոցի լուծարման լուծարային հանձնաժողովը ստեղծվում է հիմնադրի որոշմամբ:

47. Դպրոցի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: